ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
30.11.2021
ՀՀ կենտրոնական բանկը դարձել է Կայուն բանկային և ֆինանսական հարթակի (SBFN) անդամ

ՀՀ կենտրոնական բանկը 2021 թ-ի նոյեմբերի 24-ից Կայուն բանկային և ֆինանսական հարթակի (SBFN) միջազգային հեղինակավոր հարթակի անդամ է:

Հարթակը ստեղծվել է Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից և օգնում է անդամներին մոբիլիզացնել տեղեկատվություն, ռեսուրսներ և գործնական աջակցություն՝ ազգային նախաձեռնությունների մշակման և իրականացման նպատակով, որոնք նպաստում են ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում կայուն ֆինանսավորման զարգացմանը: SBFN-ը զարգացող շուկաների ֆինանսական հատվածի կարգավորողների համար ստեղծված կամավոր հարթակ է՝ գիտելիքի փոխանակման և կայուն ֆինանսավորման կարողությունների զարգացման նպատակով: Հարթակին ներկայումս անդամակցում է 66 հաստատություն՝ թվով 44 զարգացող երկրներից:

Հարթակի անդամները պարտավորվում են զարգացնել կայուն ֆինանսները՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան՝ նպատակ ունենալով բարելավել բնապահպանական, սոցիալական և կառավարչական (ESG) ռիսկերի կառավարումը, և ուղղել կապիտալի հոսքերը դեպի կլիմայի դրական ազդեցություն ունեցող գործունեություն:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:
ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն
հեռ/ֆաքս. (010) 56 37 61
էլ-փոստ. mcba@cba.am
www.cba.am